ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԱՇՈՏ ԱԹՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աթյան.

Ի պատասխան Ձեր՝ 05.10.2017թ. հ.04/Ե 07 գրության, տեղեկացվում ենք.

Ձեր կողմից գրությամբ հիշատակված «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով Երևանի վարչական տարածքից դուրս գտնվող բնակավայրերի պարտադիր տրանսպորտային սպասարկումն ապահովելու մասով Երևանի քաղաքապետարանի համար որևէ պատասխանատվություն սահմանված չէ:

Համաձայն ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի մոտ 2009թ. հոկտեմբերի 27-ին կայացած խորհրդակցության ԱՂԱ-1 արձանագրության 2-րդ կետի պահանջների, ըստ որի, Երևանի վարչական տարածքի սահմաններից մինչև 5 կմ հեռավորությամբ բնակավայրերի տրանսպորտային սպասարկումը նախատեսվում է իրականացնել Երևանի ներքաղաքային երթուղիների միջոցով, ՀՀ Կոտայքի մարզի Քասախ գյուղի բնակչության տրանսպորտային սպասարկումն իրականացվում է Երևանի ներքաղաքային միկրոավտոբուսային հ.37 երթուղով (գ. Քասախ-գ.Արգավանդ «Զվարթնոց» օդանավակայանի բեռնահամալիր), որում օրական շահագործվում է միջինը 20 միավոր շարժակազմ: Քասախ գյուղի տրանսպորտային սպասարկման բարելավման հարցը նախկինում ևս բարձրացվել է, որի առնչությամբ կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ դեպի Քասախ տանող ճանապարհահատվածում օրվա որոշակի ժամերին չկա կայուն ուղևորահոսք, այն շատ ցածր է և շահագործման արդյունավետության տեսանկյունից ելնելով՝ մինչև Քասախ գյուղ նոր երթուղու կազմակերպման հնարավորություն ներկայումս չկա:

Ինչ վերաբերում է Երևանի ներքաղաքային ավտոբուսային հ.27 երթուղու ուղեգիծը մինչև Քասախ գյուղ երկարացնելու առաջարկին, ապա այն նախկինում ուսումնասիրվել և քննարկվել է երթուղին սպասարկող կազմակերպության հետ, սակայն վերջինս հրաժարվել է երթուղին շահագործել մինչև Քասախ գյուղ: Քասախ գյուղի տրանսպորտային սպասարկման բարելավման հարցը լրացուցիչ կքննարկվի, ներկայումս ընթացքի մեջ գտնվող, Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի մշակման աշխատանքների ընդհանուր համատեքստում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ